

**ԱՐՑԱԽ-ՈՒՏԻՔԻ ՆՊԱՍՏԸ ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏԻ ՇԱՐԺՄԱՆ ԴԵՄ,
«ԽՈՐԱՆՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

1. Առաջին եկեղեցիների հիմնադրման հետ առաջացավ **պատկերահարգության և պատկերամարտության** պայքարը, որը շարունակվեց մինչև Արաբական խալիֆաթի նվաճումները: Դա համաշխարհային մեծ պայքար էր, որի թեժացումը ցնցեց Բյուզանդական Կայսրությունը, վիթխարի մշակութային և գեղարվեստական կորուստներ հասցրեց նաև հայ ժողովրդին, հատկապես կրակապաշտ և մահմեդական պատկերամարտիկների գերիշխանության և ազդեցությունների շրջաններում (Սասանյաններ, արաբներ, թուրք-սելջուկներ, Լենկթեմուր և այլն):

Այդ վիթխարի շարժման ավերածությունները հսկայական էին հատկապես Պավլիկյանների շարժման, արաբական էքսպանսիայի և Բյուզանդիայում 7-8-րդ դդ. հայ, ասորի և հույն միմյանց հաջորդող պատկերամարտիկ կայսրերի (Փիլիպպիկոս Վարդան, Լևոն Յայ և այլն) ժամանակ: Եվրոպայում պատկերամարտի շարժումը չընդունեց նման ցավագին բնույթ: Այնտեղ էլ Կարոլինգյան Կայսրության տրոհումից հետո սկսվեց եվրոպական ազգերի ձևավորման ընթացքը, որն ուղեկցվում էր արաբների, նորմանների, հունգարների և սլավոնների արշավանքներով, և միայն խաչակրաց արշավանքների և ուխտավորների համար նոր ռոմանական պատկերազարդ եկեղեցիների կառուցման և ճանապարհների գծման շնորհիվ սկսեցին ձևավորվել եվրոպական ազգերը: Բայց այդ պայքարը շատ տարբեր էր պատկերամարտի դեմ պայքարից:

Իսկ ի՞նչ կորցրեցին հայերը և հույները այդ կործանարար շարժումների ընթացքում: Յայերը Եզիդ խալիֆի (720-724) հրամանով (Ղևոնդ Երեց) կորցրեցին որմնանկարները, քարե քառակող կոթողները և

թևավոր խաչերը, ամբողջ գրքարվեստը¹։ այդ ամենից հետո հայերը չվայրենացան Հովհան Օծնեցու և Ստեփանոս Սյունեցու նման հոգևորական գործիչների շնորհիվ և 9-10-րդ դարերից ստեղծեցին վանքեր, վանական դպրոցներ, վիթխարի գրքարվեստ, խաչքարեր, դեկորատիվ կիրառական ծիսական առարկաներ և այլն։ Այսինքն հայ հոգևորականները հիմնականում իշխանների նման չլքեցին երկիրը և պահպանեցին ու բորբոքեցին հայրենաշունչ ոգին ու բարեպաշտությունը։

Իսկ հույները կորցրին անտիկ փիլիսոփայության, գիտության, պոեզիայի գրեթե ողջ պաշարը, դրա հետ կիրթ և ուսյալ հոգևորականներին ու չինովնիկներին, որոնք կամ սպանվեցին, կամ անդարձ աքսորվեցին, կամ ուղղակի փախան արաբների մոտ, կորցրին անտիկ հելլենիստական շատ հուշարձաններ, որմնանկարներ, տաճարներ, եկեղեցիներ, այդ թվում վաղ բյուզանդական մշակութային ժառանգությունը, բացի Իտալիայում եղածների մի մասից²։ Ահա այդ մեծ շարժման վնասները, որոնք ո՞վ կարող է հաշվել, և այդ դարաշրջանից Հայաստանում, թե նախկին Բյուզանդիայում գտնված ամեն մի բեկոր թանկ է, որ պետք է գուրգուրել։

Պատկերամարտի այդ համաշխարհային շարժումներից դուրս չի մնացել նաև Արցախը։ Արցախում այդ շարժման մասին թանկարժեք վկայությունների վրա հատուկ կանգ է առել խոշորագույն հայագետ և բյուզանդագետ Ս. Տեր-Ներսեսյանը³։ Նա հղում է Հովհան Օծնեցի կաթողիկոսի (717-728) «Ընդդեմ Պաղիկեանց» ճառին, ըստ որի Ներսես կաթողիկոսի վախճանվելուց հետո Հայաստանում պատկերամարտիկները «թաքնվեցին մեր աշխարհի տարբեր վայրերում։ Եվ որոշ պատկերամարտներ, կշտամբվելով Աղվանից կաթողիկոսներից, բաժանվելով եկան և հարեցին նրանց, որովհետև ճշմարտությունից հեռա-

¹ «Իսկ նրանից (Օմարից) հետո տիրեց ոմն եգիտ, որը... պիղծ դևի կատաղությանը բռնված հրաման տվեց փշրել և խորտակել մեր Տիրոջ ու Փրկչի ճշմարիտ մարդեղության և նրա աշակերտների կենդանագիր պատկերները. խորտակեց և Քրիստոսի տերունական խաչի նշանը, որը շատ տեղերում կանգնեցված էր հանուն համազոտ Երրորդության և նրա երկրպագության համար» (Ղևոնդ, Պատմություն, թարգմ., ներած. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982, էջ 88, էջ 155, ծան. 87)։

² Տե՛ս **В. Н. Лазарев** История византийской живописи, Москва, 1986, т. I (гл. "Эпоха иконоборчества", с. 53-60).

³ **Ս. Տեր-Ներսեսյան**, Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 7-30, էջ 16-19։

ցածը սիրում է հանդիպել իր նմաններին»¹:

Քանի որ խոսքը վերաբերում է պավլիկյաններին, Ս. Տեր-Ներսեսյանը կարծում է, թե այդ դեպքը եղել է Ներսես Բ-ի (548-557) օրոք²:

Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» 46-րդ գլուխը ներկայացնում է «Մեծկողմանց Դավիթ եպիսկոպոսի խնդրանքը Հովհան Մայրագոմեցուց արծանների և նկարների վերաբերյալ»: Ըստ Ս. Տեր-Ներսեսյանի, այս նամակը գրված է 682-683 թթ., քանի որ Դավթին հաջորդած Իսրայել եպիսկոպոսը իբրև քարոզիչ և հովվապետ 684 թ. գնում է հոների մոտ, հսկելով իր հոտին նաև Մեծկողմանքում³: Խոսքը Հետու, Թորոս և Գրիգոր պատկերամարտիկների մասին է, որոնք Հովհան հակաթոռ կաթողիկոսի ընտրությունից հետո Դվինից գնում են Սյունիքի Սոթք գավառը քարոզելու, և ապա Մովսես կաթողիկոսի պատվերին հակառակ անցնում են Արցախ և խռովություն սերմանում, այնուհետև հայտնվում են Ուտիքում, և Գարդմանա իշխանը նրանց շղթայակապ ուղարկում է ետ⁴: Այստեղ կարևոր ակտը Մեծկողմանց Դավիթ եպիսկոպոսի խնդրանքն է բացատրելու, թե ովքե՞ր են այդ մարդիկ, որ պատկերներ չեն ընդունում, մկրտություն չեն անում, աղ չեն օրհնում, պսակադրություն չեն կատարում, և այդ պատճառով է, որ քահանայությունը վերանում է երկրից⁵ Հովհան Մայրագոմեցու բացատրությունները կապվում են եկեղեցու մեծ խորհուրդների հետ, որոնցից մեկը պատկերներն են: Մայրագոմեցին նույնիսկ այսօր ընդունված տեսակետից տարբեր բացատրություն է տալիս պատկերամարտության մասին, որ պատկերամարտությունը նախ հռոմեների (հույների) մեջ երևաց, որի պատճառով Կեսարիայում մեծ ժողով կայացավ. հրամայեցին Աստծո տանը (եկեղեցում) պատկերներ նկարել⁶:

2. Արցախի հետ է կապված նաև «Խորանների մեկնություններից»

¹ Հովհան Օծնեցի, Երկեր, Գրաբարից փոխադրումը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Համբարձումյանի, Երևան, 1999, էջ 133-134:

² Տեր-Ներսեսյան, Նշվ. աշխ., էջ 16:

³ Նույն տեղում, էջ 18:

⁴ Նույն տեղում: Տես նաև՝ Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քնն. բնագիրը և ներածությունը Վարազ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 267:

⁵ Մովսես Կաղանկատուացի, էջ 267:

⁶ Նույն տեղում:

մեկը, որ գտնում ենք Վանական Վարդապետի «Հարցմունք և պատասխանիք» ժողովածուում¹: Խորանների մեկնությունները ձեռագիր ավետարանների խորանապատկերներում գույների, սյունների, խոյակների, կամարների, թռչունների, բույսերի խորհուրդների և գեղագիտական նշանակության մասին միջնադարյան բացատրություններ են:

Մեզ հայտնի առաջին ձեռագիրը Մատենադարանի 2273 ժողովածուն է², ընդօրինակված 1252 թ. Խորանաշատում «ի հայրապետութեան Ներսիսի Աղուանից կաթուղիկոսի»: Ձեռագրում հիմնականում Վանական Վարդապետի երկերն են: Սատյանն ընդօրինակված է Մխիթար Գոշի աշակերտ Վանական Վարդապետի մահից մեկ տարի անց: Վանականի գործունեությունը բարձր է գնահատված և ունեցել է համահայկական նշանակություն. ա) հիմնել է Տավուշի Խորանաշատի վանքը. բ) նրա աշակերտների՝ Վարդան Արևելցու, Կիրակոս Գանձակեցու և իր իսկ ծառայությունները այնքան մեծ են, որ մոնղոլների աշխարհակալության և Խաչակրած արշավանքների շրջանում հայերը թե Կիլիկիայում, թե Մեծ Հայքում ոչ միայն չուժացան, այլև ծաղկեցրին իրենց ինքնավարությունը և պետությունը, վանքերը և դպրությունը, ստեղծեցին համալսարաններ: Հետսելջուկյան շրջանում, Մխիթար Գոշից և Ներսես Լամբրոնացուց հետո Վանականը դարձավ ամենամեծ ուսուցիչը և սկիզբ դրեց հանրագիտական աստվածաբանական մեկնությունների նոր ժանրի, որը զարգացրեցին Վարդան Արևելցին և հատկապես Գրիգոր Տաթևացին: Վանական Վարդապետը զրել է նաև «Խորանների մեկնություն», հետևելով Ստեփանոս Սյունեցուն և Ներսես Շնորհալուն, ունենալով իր մեծ ներդրումը միջնադարյան զարդարվեստի պատկերագրության համար այդ խիստ կարևոր ժանրում: Խորանների մեկնությունների այդ ժանրը թերևս զալիս է եվսեբիոս Կեսարացու ժամանակներից, քանի որ վերջինս կազմեց տասը համաբարբառներ, այսինքն չորս Ավետարանների իր իսկ գլխաբաժանումների համապատասխանությունը և դրանք ձևավորեց ըստ սուրբ վայրերում Կոստանդին կայսեր կառուցած եկեղեցիների սիմվոլիկայի, մասամբ օգտվելով

¹ Տես, Մեկնությունք խորանաց (արվեստի տեսության միջնադարյան հայկական բնագրեր), աշխ. **Վ. Գ. Ղազարյանի**, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2004, էջ 300-306, 387-390:

² Նույն տեղում, էջ 127:

անտիկ օրացույցների ու սարկոֆագների կամարաշարքերից¹: Այդ համաբարբառ ցանկերի կամարածև ձևավորման համակարգը բացատրում են միայն հայ եկեղեցու հայրերը՝ Ստեփանոս Սյունեցին, Ներսես Շնորհալին, Վանական Վարդապետը, Գրիգոր Խլաթեցին, Գրիգոր Տաթևացին և ուրիշներ, անուններ, որոնց դերը անփոխարինելի է հայ եկեղեցու պատմության մեջ: Իսկ այդ մեկնությունների նշանակությունը անփոխարինելի է ոչ միայն հայկական, բյուզանդական, լատինական, վրացական, ասորական քառավետարանների խորանների, այլև խաչքարերի ու ճարտարապետական զարդարվեստի շատ գաղտնիքներ գիտականորեն հասկանալու համար:

3. Հնուց ի վեր Արցախը արդյունահանել է ոսկի և մետաղներ: Համապատասխանաբար մետաղի արդյունահանման հետ զարգացել է մետաղագործությունը իր արհեստներով՝ դարբնություն, ոսկերչություն, պղնձագործություն: Ջվանշիր արքան (7-րդ դար) իր «ապավինության օթևանը» (տաճարը) զարդարելու համար «մեծ ծախսեր անելով նկարիչներ գործի դրեց և գմբեթից մինչև դռան բարավորները նկարեց և պաստառեց կերպասներով, իսկ տաճարի դուռը... արծաթապատեց և հրաման տվեց քանդակագարդել»²:

Սա խոսում է տեղի վարպետների մասին: Պատմիչը, թվարկելով Ջվանշիր արքայի շքեղ նվերները, դրանց թվում նշում է. «գեղեցկաշար մարգարիտներով ընդելուզված պատմունճաններ, ոսկեհուռ կերպասներ, ողիբերոն (ըստ Աճառյանի, ասեղի ծայրով հյուսված) դիպակներ, վառ գույնի ծիրանիներ..., որոնք չէին տեսնված թե՛ առաջներում և թե՛ այժմ...»³:

Պատմիչը իր հերոս Ջվանշիրին համեմատում է Հռոմի օգոստոս Տիբերիոսի և հատկապես երանելի Կոստանդիանոս կայսեր հետ: Էլ ավելի հատկանշական է, որ Բյուզանդիայի հայազգի Փիլիպպիկոս Վարդան կայսրը զնդաններից հանում է Աղվանքի իշխան Վարագ-Տրդատի որդիներ Գագիկին ու Վարդանին և Հիսուսի «կենսատու» խաչից մի մաս է նվիրում նրանց, որոնք այն բերում են Աղվանքի Միքայել

¹ Տե՛ս, **Р. Амirkhanyan**, Происхождение и символика декоративного мотива хоранов. - ՀՀ ԳԱԱ Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 2004, 1 (165), էջ 175-195:

² **Սովետս Կաղանկատվացի**, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմ., առաջաբանը և ծանոթ. **Վ. Առաքելյանի**, Երևան, 1969, էջ 153:

³ Նույն տեղում, էջ 155:

կաթողիկոսին: Վերջինս կանգնեցնում է Տերունական խաչ, որի արծա-
նագրության մեջ նշում է «մեծ ոսկերիչ Վարազդի» անունը, որը հավա-
նաբար մասնատուփ է պատրաստել այդ գերագույն մասունքի համար¹:

Այս թանկարժեք վկայությունը մեզ բացահայտում է ավանդույթ, որ
կապված է եկեղեցին՝ «Աստոծ տունը» որմնանկարներով ու ասեղնա-
հյուս կերպասներով զարդարելու հետ: Այն Արցախում շարունակվում է
մահ հետագա դարերում: Կիրակոս Գանձակեցին «Չայոց պատմու-
թյան» մեջ վկայում է Վախթանգ Չաթերքցի իշխանի կին Արզու Խա-
թունի մասին, որը Նոր Գետիկի շինարարությանը նպաստ բերած իր եղ-
բայրներ Դավթին և Սաղունին և իր ամուսնուն է միանում՝ գործելով գե-
ղեցիկ վարագույր իր դուստրերի հետ «զարմանալի տեսնողների հա-
մար, այժի փափկագույն մազից, ներկված պես-պես և զանազան գույ-
ներով, քանդակակերպ և նկարված պատկերներով, Փրկչի տնօրինա-
կան և այլ սրբերի ճշմարիտ պատկերահանումներով, որոնք հիացնում
էին տեսնողներին: Եվ տեսնողները Աստծուն օրհնություն էին տալիս, որ
կանանց տվել է ջուլիակության իմաստություն և նկարչության հանճար,
ինչպես ասված է Դավթի մոտ (Յովք ԼԸ, 36, Ելք ԼԶ, 1 և այլն), ոչինչ չէր
պակասում խորանի կազմությունից, որ պատրաստեցին Բեսելիելը և
Եղիաբը, թող հանդգնություն չլինի՝ ասել, որ նույն Սուրբ Դոզին էր շար-
ժում թե նրանց, և թե սրանց: Եվ նա ոչ միայն ծածկույթ պատրաստեց
այս եկեղեցու, այլև Չաղբատավանքի և Մակարավանքի և Դադիվանքի
համար...»²: Նույնքան շնորհալի էր նաև Վախթանգ Տանգիկի կին
Խորիշահը³: Չետաքրքիր է, որ պատմիչը ազնիվ կանանց շարժված է
համարում Սուրբ Դոզու շնորհներով, ինչպես Մովսեսի խորանի ճար-
տարապետներ Բեսելիելին և Եղիաբին, որոնց անունները տրված են
«Խորանների մեկնություններում» հենց նույն իմաստով⁴:

Մեր նպատակն էր ցույց տալ Արցախի և նրան կից մարզերի համա-
հայկական նշանակությունը հայ որմնանկարչության մեջ և պատկերա-
մարտի դեմ մղված պայքարում ըստ 7-13-րդ դարերի հեղինակների,
ինչպես և Վանական Վարդապետի կարևոր դերը «Խորանների մեկնու-

¹ Նույն տեղում, էջ 244:

² **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն հայոց, աշխ. Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի,
Երևան, 1961, էջ 215-216:

³ Նույն տեղում, էջ 268:

⁴ Տես Մեկնութիւնք խորանաց, էջ 229, 231, 248, 284, 329, 356, 368 և այլն:

թյունների» շարքը լրացնելու հարցում, որոնց միջնադարագիտական մեծ արժեքը ակնհայտ է: